

Ջոյս

Մշակութային և Հասարակական
Երկարաթափեր

1200 թուման
Հայաստանում 320 դրամ



Գ Ի Ի Մ Բ Ի Ն ՓՈՔԻ ԵՐԵՒԱՆ ԶԷ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 3 **Սաֆարովի ազատ արձակման արձագանքները**
Գոհար Աբրահամեան
- 4 **Ալիեւը անել դրույթան մէջ դրեց Սարգսեանին**
Դաւիթ Մկրտչեան
- 4 **Հայաստան-Հունգարիա յարաբերութիւններ**
Գայիանէ Աբրահամեան
- 6 **Սպահանի հայոց թեմի կանոնադրքի հիմնական վերանայման եւ նոյնիսկ բեկանման անհրաժեշտութեան մասին**
Նոր Զուղայի մի խումբ մտաւորականներ
- 13 **Ռ՛վ է Քալուստ Գիւլբենկեանը**
- 15 **Նոր Զուղայի թատրոնի հետքերով.**
Քրիզոր 3. Գալթեան
Նիկիտ Միրզայեանց
- 17 **Խաղաղութեան գրականութիւն, պատերազմի քաղաքականութիւն**
Հոսէյն Սանափուր
- 18 **Վախ արտաքին տգեղութիւնից**
- 19 **Ինչպէ՛ս ճիշտ արեւայրուք ընդունել**
- 20 **Ընտանեկան լուսանկարներ. վստահ է՞ք**
- 22 **մարզանք**
Արման Տէր Ստեփանեան

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ սարի, քիւ130, Սեպտեմբեր 13, 2012,
1200 թուման
Հայաստանում 320 դրամ



- 8 **Փիւմրին փողը Երեւան չէ**
Ռ.Ս.
- 10 **Փիւմրիի նկարիչ Անանիկեանը**
- 10 **Փիւմրիի պատմութիւնը**
- 12 **Փիւմրիի աշխարհագրական դիրքը**

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	Այս համարի պարսկերէն էջերում		Սաֆարովի ներումը խաղաղութեան բանակցութիւնների խանգարման փորձ		Նկարչութեան ցուցահանդէսը «Արարատ»-ում Անի Ղեւիչեան
3	Հայաստանը` 2012 թուականի ջախամատի օլիմպիադի չեմպիոն	6	Դիանա Աբլար Արա Ղազարեանս	10	«Մատեան ողբերգութեան» հեղինակ Նարեկացին Ազատ Մաթեան
4	Ռամիլովի ազատումը, Հայաստան-Հունգարիա կապերի խզումը Թուրաջ Խոսրաւի	7	Նոր գիրք` Հարաւային Մաջիդիէ թաղամասի պատմութիւն	13	Պատմաձօք` Վարդավար Քաթրին Եաղուբի
5	Իրանում ՀՀ դեսպանը.	8	Թալին Հակոբեանի		

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտոնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hoosy@inbox.com www.hoosy.com</p>
---	---	--	---

«Էսփիլետ» ընկերության տնօրեն Մեծարգոյ պրն. Փիրումեան

Նկատի ունենալով Սաթարի եւ Աբշենասան անհամաչափ մակերեսով հատուածի կարելոր պրոյեկտի եւ տարածքի յարակից ու ամբողջացելիք նախագծերի իրականացման համար ցուցաբերած Ձեր արտակարգ ճիգերը, ուստի այսպիսով գնահատում եւ մեծարում ենք համաքաղաքացիներին ծառայութիւն մատուցելու ուղղութեամբ Ձեր ներդրած դուատելի ջանքերը:

Վստահ ենք, որ գիտական քննախոյզ հայեացքով եւ ծառայելու բարձր ոգի դրսեւորելով, ազնիւ, ջերմեռանդ ու գիտակցած դեկավարութեան շնորհիւ կարժանանաք առաւել ու տեւական յաջողութիւններ:

Ամենակալն Աստուծոց հայցում ենք Ձեզ յարաճուն վերելք եւ ամենայն բարիք կեանքի ողջ ասպարեզներում:

5-րդ շրջանի քաղաքապետ՝
Սաիդ Թոլուի



ՍԱՖԱՐՈՎԻ ԱՉԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՆ ԴՆԳՈՒՄ Է, ՈՐ ԱԴՐԲԵՋԱՆԸ ԳՐԺԵԼ Է ԽՈՍՏՈՒՄԸ

Գոհար Արրահամեան

Հայաստանում շարունակվում են տարբեր մակարդակներում ծառայած թե՛ քննարկումներն ու քննադատությունները 8 տարի առաջ Բուդապեշտում, ՆԱՏՕ-ի դասընթացներին հայ սպային կացնահարած ադրբեջանցուն հայրենիք վերադարձնելու եւ ազատ արձակելու վերաբերեալ:

26-ամեայ հայ սպայ Գուրգէն Մարգարեանին 2004 թւականի Փետրուարին, առանձնակի դաժանութեամբ կացնահարելու մեղադրանքով Հունգարիայի դատարանի կողմից ցմահ ազատազրկման դատապարտւած ադրբեջանցի սպայ Ռամիլ Սաֆարովը Օգոստոսի 31-ին արտայանձնեց Ադրբեջան եւ, հայրենիք ժամանելուն պէս, ներման արժանացաւ երկրի նախագահ Իլհամ Ալիեւի կողմից: Մարդասպանը հռչակեց «ազգային հերոս» եւ պարգևատրուեց բնակարանով ու մայրի կոչումով: Մինչդեռ, Ադրբեջանի արդարադատութեան նախարարութիւնը Հունգարիայի արդարադատութեան նախարարութեանը յղած 2012 թւականի Օգոստոսի 15-ի նամակում խոստացել էր Սաֆարովի նկատմամբ արտայանձնումից յետոյ կիրառել որոշակի պատժաչափ եւ պայմանական ազատ արձակել միայն ազատազրկման առնուազն 25 տարին լրանալուց յետոյ: Արտայանձնման օրը ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ Հայաստանը կասեցնում է Հունգարիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնները: Շաբաթ օրը (Սեպտ.1-ին) բողոքի ակցիաներ կազմակերպւեցին Երեւանում ՀՀ արտգործնախարարութեան եւ Հունգարիայի հիւպատոսութեան առջեւ: Հունգարացի հայազէտ,



Գուրգէն Մարգարեան

ծագումով հայ Բենեդէկ ժիզմոնդը երկուշաբթի (Սեպտ.3) լրագրողների հետ հանդիպմանը նշել է, որ Հունգարիան ծանր տնտեսական ճգնաժամի մէջ է, եւ ըստ իր տեղեկութիւնների՝ Ադրբեջանը խոստացել է 3 մլրդ եւրօ: «Այդ գործարքը նոյնիսկ դեռ չի կայացել: Հունգարիան տեղեակ էր վտանգից, որ Սաֆարովին հնարաւոր է ազատ արձակեն, այդ իսկ պատճառով երաշխիք էր պահանջել եւ Արդարադատութեան նախարարութիւնը նամակով վստահեցրել էր, որ Սաֆարովը Բաքուում շարունակելու է պատիժը», - ասել է ժիզմոնդը: «Ֆէյսբուք» սոցիալական ցանցում Հունգարիայի քաղաքացիների կողմից ստեղծւել է «Հայաստան, ների՛ր մեզ մեր վարչապետի համար» խումբը, որը երկու օրւայ ընթացքում հաւաքել է 9000-ից ւելի կողմնակից: Մայր Աթոռ սբ. Էջմիածնի մամլոյ դիւանից էլ տեղեկացնում են, որ շաբաթ օրը Հունգարիայի առաջնորդ, Հունգարիայի Կաթոլիկ եպիսկոպոսների համագումարի նախագահ Կարդինալ Փիթեր Էրդոն Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղւած գրութեամբ զօրակցութիւն է յայտնել հայ ժողովրդին: Մի շարք հունգարական լրատւամիջոցների էլ հաղորդում են, որ կիրակի (Սեպտ.2) Հունգարիայի Արտաքին գործերի պետքարտուղարը հանդիպում է ունեցել Բուդապեշտում Ադրբեջանի դեսպանի հետ եւ նրան դիւանագիտական նոտա է փոխանցել ու յայտարարել, որ Հունգարիան դատապարտում է Ռամիլ Սաֆարովի ներման մասին Ադրբեջանի որոշումը:

Ռամիլ Սաֆարով



ԻԼՆԱՍ ԱԼԻԵԸ ԱՆԵԼ ԳՐՈՒԹՐԵԱՆ ՄԵՉ ԳՐԵՅՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Դաւիթ Սկրտչեան

Իլիան Ալիեւը Սաֆարովի արդէն յայտնի դարձած պատմութիւնով իր համար լուծեց մի քանի խնդիր, որոնցից մէկը, անշուշտ, Սերժ Սարգսեանին անել դրութեան մէջ զգեւել էր: Իրօք որ, այս պատմութիւնից յետոյ Սերժ Սարգսեանն իր հնարաւոր որոշումը ընտրելիս յայտնել է պատային իրավիճակի մէջ:

Բանն այն է, որ այս քայլով Ադրբեջանը ցոյց տուեց, որ իր բնոյթով ֆաշիստական պետութիւն է, որտեղ բացայայտօրէն հերոսացնում են շարքային մարդասպանին:

Այս պարագայում, սակայն, այդ երկրի հետ յարաբերելիս Հայաստանի նախագահը յայտնել է փափուղու մէջ:

Իրօք որ, ի՞նչ որոշում կը կայացնի Սերժ Սարգսեանը, որ ամօք չլինի ոչ հայ, ոչ էլ միջազգային հասարակութիւնների մօտ: Փորձենք քննարկել մի քանի տարբերակներ:

Տարբերակ առաջին՝ Հայաստանը դուրս է գալիս բանակցային գործընթացից:

Այս տարբերակը թէւ տրամաբանական է հնչում, քանզի՝ ի՞նչ բանակցութիւններ ֆաշիստական ռեժիմի հետ, սակայն գործող նախագահը չի կարող գնալ նման քայլի, քանզի դրա արդիւնքը կը լինի այն, որ Բաքուն կը մեղադրի բանակցային գործընթացի տապալման մէջ Երեւանին, եւ լրացուցիչ «լեգիտիմ» հիմք կը ստանայ նոր պատերազմ վերսկսելու համար:

Սերժ Սարգսեանը չի գնայ այդ քայլին՝ քաջ գիտակցելով, որ Հայաստանը պատրաստ չէ նոր պատերազմի, քանզի ով՝ ով, բայց ինքը քաջ գիտակցում է, թէ Տիգրան Սարգսեանի հետ ինչպէս են «քանդել» մեր տնտեսութեան

պոտենցիալը՝ վերջին 4 տարիների ընթացքում:

Տարբերակ երկրորդ՝ Հայաստանը դուրս չի գալիս բանակցային գործընթացից, սակայն, պաշտօնապէս ճանաչում է Ղարաբաղի անկախացումը եւ սկսում է նրա միջազգային ճանաչման գործընթացը՝ ողջ աշխարհով մէկ:

Այս տարբերակին նոյնպէս պատրաստ չէ Սերժ Սարգսեանը, քանզի այդ դէպքում Բաքուն կը դադարեցնի բանակցութիւնները եւ կը վերսկսի պատերազմական գործողութիւնները Հայաստանի հետ, ինչին, ինչպէս նշեցինք, Երեւանը պատրաստ չէ:

Տարբերակ երրորդ՝ Սերժ Սարգսեանը գրեթէ դատապարտւած է ոչ մի լուրջ գործողութիւններ չանելու Ադրբեջանի նկատմամբ, քանզի այսօր այդպիսի ռեսուրս Հայաստանը չունի: Եւ դա նա՝ Սերժ Սարգսեանը այսօր ամենալաւն է հասկանում: Իսկ այդ դէպքում ինքը՝ Սերժ Սարգսեանը յայտնելու է շատ ծիծաղելի վիճակի մէջ՝ ոչ միայն հայ հասարակութեան առջեւ, այլեւ միջազգային շրջանակներում, որտեղ դիտելու են, թէ ինչպէս է Հայաստանի նւաստացած նախագահը շարունակում բանակցութիւնները ֆաշիստական Ադրբեջանի հետ: Բայց այդ դէպքում նւաստացած վիճակի մէջ յայտնելու է ոչ միայն Սերժ Սարգսեանը, այլ նաեւ Հայաստանի ժողովուրդը, ինչը չափազանց վիրաւորական է մեզ համար:

Իսկ ո՞վ է այդ իրավիճակի գլխաւոր պատասխանատուն, անշուշտ, կարիք չկայ յիշեցնելու, քանզի ամէն ինչ արդէն պարզ է նոյնիսկ շարքային դպրոցականների համար:

Zham.am

ՀԱՅԱՍՏԱՆ-ՀՈՒՏ

Սաֆարովի արտայանձնումից յետոյ, երբ Հայաստանն առաջին անգամ որոշում կայացրեց խզել դիւանագիտական յարաբերութիւնները Յունգարիայի հետ, հարց ծագեց, թէ որքանով է Հայաստանին ձեռնտու նման կտրուկ որոշումը:

Շատերը վստահ են, որ դիւա-



Հունգարացիները դատապարտում են Սաֆարովի ազատումը

նագիտական յարաբերութիւնների խզումը Յունգարիայի համար որեւէ հետեւանք չի ունենայ, եւ դա բացարձակ գործող լծակ չէ որեւէ պետութեան դէմ:

Քաղաքական առումով Հայաստանը ոչինչ չէ հետեւեց, բայց, ինչպէս պնդում է նախկին վարչապետ, «Հայ ազգային կոնգրես» խմբակցութեան պատգամաւոր Յրանտ Բագրատեանը, «անուղակիօրէն կորցրեց 25 մլն դոլարի ապրանքաշրջանառութեան հնարաւորութիւն»: ՀՀ Ազգային վի-

ՆԳԱՐԻԱ. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ «ԱՆՎՆԱՍ» ՍԱՌԵՅՈՒՄ

Գայիանէ Արահամեան

Ճակագրական ծառայութեան տւեալներով՝ 2011 թւականին Հայաստան - Հունգարիա առեւտրաշրջանառութիւնը կազմել է 25.1 միլիոն դոլար: Մինչդէռ Հայաստանից Հունգարիա արտահանումը կազմել է ընդամենը կէս միլիոն դոլար: Հայաստանը Հունգարիա արտահանում է հիմնա-

«Առեւտրային ու ներդրումային յարաբերութիւններն այդ համաժողովից յետոյ ակտիւացան, սակայն Հունգարիայից որեւէ ռազմավարական նշանակութեան ապրանք չի ներկրուում, եւ դիւանագիտական յարաբերութիւնների սառեցման այս որոշումն, ըստ էութեան, չի վնասում Հայաստանին», - «Արմենիանաու»-ին ասում է Առեւտրաարդիւնաբերական պալատի աշխատակազմի ղեկավար Ասքանազ Արահամեանը: Հունգարիայի դէմ Հայաստանում սկսած տարբեր ակցիաների հետ մէկտեղ Երեւանի բանուկ հատւածներում պաստառներ փակցւեցին՝ «Բոյկոտել հունգարական ապրանքները» կոչերով, սակայն դա գրեթէ նոյն ազդեցութիւնն է ունենում, ինչ հայաստանեան շուկան ողողած թուրքական ապրանքների դէմ բոյկոտը: Բայց, եթէ Հունգարիան տնտեսական ու քաղաքական առումով Հայաստանի համար կարեւոր նշանակութիւն չունի, ապա կրթական ոլորտում այն լուրջ ներգրաւածութիւն ունի: Անկախութիւնից ի վեր՝ Բուդապէշտում տեղակայուած Եւրոպական կենտրոնական համալսարանում ուսանել են աւելի քան 120

հայ երիտասարդներ: Այս պահին այնտեղ սովորում է մօտ 12 հայ: Արտայանձնման որոշման նոյն օրը սոցիալական ցանցերում շատերը յորդորում էին հայ ուսանողներին բոյկոտել ու դադարեցնել ուսումը: Հայ ուսանողները որոշեցին, որ առաւել մեծ ազդեցութիւն կունենայ իրենց բողոքի ակցիան. հանրակացարանի սենեակների դռներին փակցրեցին Գուրգէն Մարգարեանի նկարը եւ իրենց այլազգի ընկերների հետ համատեղ բաց նամակ յղեցին Հունգարիայի վարչապետին: Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնեանն էլ շաքաթակազմին յայտարարել էր, որ չեն մասնակցելու Կենտրոնական եւրոպական համալսարանի (ԿԵՀ) Արեւելեան միջերկրական ուսումնասիրութիւնների կենտրոնի կազմակերպած գիտաժողովին: Ուրբաթ՝ Սեպտեմբերի 7-ին տարածած յայտարարութեամբ ԿԵՀ եւ ԵՊՀ մի խումբ ուսանողներ կոչ են արել կրթական համագործակցութիւնը շարունակել՝ անկախ քաղաքական յարաբերութիւնների վատթարացումից:

www.armenianow.com



կանում թարմ եւ սառեցած միրգ, բանջարեղէն, ընկուզեղէն, պահածոներ, հանքային ջրեր եւ բջջային հեռախօսների մասեր: Ըստ տնտեսագիտութեան դոկտ. Բագրատեանի՝ ներմուծման գումարից էլ Հայաստանը կորցնելու է մօտ 5 մլն դոլարի հարկերը: Ներդրումների առումով էլ Հունգարիան առանձնապէս ակտիւութեամբ աչքի չի ընկել: Երեք տարի առաջ, երբ առաջին պետական այցով Բուդապէշտ մեկնած նախագահ Սերժ Սարգսեանը արժանացաւ ջերմ ընդունելութեան, կայացաւ նաեւ հայ-հունգարական գործարար համաժողովը:



Հայ երիտասարդները Երեւանում բողոքում են Սաֆարովի ազատ արձակման դէմ

ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՒ ՆՈՅՆԻՍԿ ԲԵԿԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նոր Ջուղայի մի խումբ մտաւորականներ

Այն ինչ մենք օրերս ականատես ենք թեհրանի թեմական խորհրդի գեկուցագրերին, որն առաջին անգամ լինելով հրապարակուում է ԱԶԱՏ մամուլի միջոցով եւ պէտք է խոստովանել, որ ողջունելի մի երեւոյթ է իրանահայութեան համար, եւ առիթ է ընծեռնում որպէսզի կարողանանք աւելի արդարացի դատենք մեր «ազգային»-ների գործունեութիւնը:

Բայց դժբախտաբար հենց առաջին հայեացքից նկատում ենք, որ մեր մօտ անցեալից այն էլ մի քանի տարւայ ընթացքում, շուրջ 3-միլիարդ ռիալ չեն վերադարձւել ազգային սնդուկ, եւ հաշւեքննիչ մարմնի գեկույցը «Թունեան» դպրոցի, «Մերի Օհանեան» ազգապատկան շէնքի, Մաշհադի հայկական պասաժի, «Արամ» ազգային սրահի, «դոկտ.Սոլթանի» ազգ. կալւածի եւ այլնի մասին, որը մտահոգիչ է եւ ահազանգ է հնչեցնում, որ անծրագիր եւ չուսումնասիրած համակարգով չի կարելի համայնքը կառավարել եւ պէտք է ունենալ, յստակ, թափանցիկ եւ օրւայ վիճակին համապատասխան մի ծրագիր եւ ոչ թէ յանձնւած բախտի քմահաճոյքին:

Սպահանի թեմը կարելի է ասել, որ մինչ օրս չի հետեւել թեհրանի թեմի օրինակին եւ իր գործունեութիւնը շարունակում է քօղարկւած պահել մեր համայնքում: (Մանրամասն կարդալ «Յոյս» 104 համարում, կամ «Իրանահայութեան ազգային

հարստութիւնը եւ Յ.Յ.Դ-ն» գրքուկը. Հրաչ Միրզախանեան. Թեհրան. 2011): Երեւի թէ Սպահանի թեմը ամենահարուստ թեմն է, որ շարունակում է իր գոյութիւնը ի նպաստ Յ.Յ.Դ կուսակցութեան բարգաւաճման:

Կարդում ենք կանոնադրութեան յօււած 11-ը՝ «Առաջնորդարանը ոչ-քաղաքական հաստատութիւն է եւ նրա անւան տակ քաղաքական գործունեութիւն չի թոյլատրուում»: Սոյն յօււածը միակ երաշխիքն է մեր համայնքի ապահովութեան տեսանկիւնից, որը որեւէ մի իշխող վարչակարգ չի կարող վտանգի նրան, պատճառաբանելով որեւէ քաղաքական առիթ: Բայց արի ու տես, որ ինչ է կատարուում մեր շրջանում: Անցեալ մի քանի տարիների ընթացքում, տարբեր առիթներով եւ միջոցառումներով, հազարաւոր յայտարարութիւններ է ցրւել մեր համայնքում, այն էլ Ս.Ա.Վանքի պաշտօնական ցրիչների կողմից, տարբեր անւան տակ, օրինակ՝ «Թաղէոս Թաղէոսեան...», «Սասուն...», «Հայ դատի համակիրներ...», «Ռուբէն երիտասարդաց...» եւ այլն:

Նախնական հաշւարկումները ցոյց են տալիս, որ առնւազն ծախսուում է տարեկան մի քանի միլիոն թուման այս զիռքս թերթիկների բազմացնելու համար, այն էլ Վանքի տպարանի միջոցով:

Լաւ հասկացանք, կուսակցութիւնը ուզում է աշխատել եւ պրո-

պագանդել, բայց ինչու չի գրանցուում պետութեան մօտ եւ չի բացում իր արտօնեալ գրասենեակ-վայրը, որպէսզի կարողանայ աշխատանք տանի, այն էլ բաց ճակատով, չէ՞ որ ժողովուրդն է որոշելու անդամակցութեան եւ համակրութեան հարցը: Ուրեմն ինչպէս պէտք է բացատրել սոյն յօււածի եւ կուսակցութեան անդամակցելու հակասութիւնը..., երեւի թէ պիտի բեկանել սոյն յօււածը կանոնադրութիւնից, բայց չէ որ պէտք է համոզել պետութեանը, որպէսզի այս «Դամոկլեան սուրը» վերցնի մեր գլխի վրայից.....:

Ինչպէս գիտենք, վերոյիշեալ միութիւնները եւ կազմակերպութիւնները պաշտօնապէս չեն արձանագրւած եւ հաստատւած պատգամաւորական ժողովի կողմից եւ նոյնիսկ նրանց դրամական աղբիւրները մեզ յայտնի չեն, արդեօք կան հաւաստի տւեալներ, որ եթէ պետութիւնը օրերից մի օր փոխի իր ներքին քաղաքականութիւնը, սոյն միութիւնների գոյութիւնը եւ հետեւաբար մեր համայնքը չի վտանգւի, չէ՞ որ կանոնադրութեան յօււած 39-ը իր ծանօթ. 18 բաժնում ասում է, որ ՄԻԱՅՆ պատգամաւորական ժողովի հաստատման կարիքը կայ եւ ոչ թէ պետութեան, եւ աւելի ցայտուն հակաօրէնսդրական օրինակը, որ ներկայ պատգամաւորական ժողովի նախագահը անդամակցում է կուսակցութեանը:

Կարդանք յօււած 5-ը՝ «Առաջ-

նորդարանը իր ընթացիկ գործերի մէջ անկախ է, իսկ վարչականօրէն ենթակայ է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան»:

Նման մի յօդուած, կոպիտ ասած, պարզապէս թոյլտուութիւն է մի երկրի միջամտութիւնը միւս երկրի ներքին գործերի մէջ, իհարկէ քօղարկուած կրօնական անւան տակ: Բոլորս գիտենք, որ երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ, ինչ-ինչ քաղաքական պատճառով, եւ դաշնակցական պարագլուխների նկրտումներով, «Ամբիլիասը» փոխարինեց «Էջմիածնին»: (Մանրամասն կարդալ «Յոյս» համար 123)

Նկատենք, որ համաշխարհային ներկայ քաղաքական վիճակը մեզ համար աւելի նպաստաւոր է որպէսզի վարչական կապեր հաստատենք Էջմիածնի հետ, վերջապէս դա մեր Մայր հայրենիքն է եւ տարբերում է Լիբանանից, եւ միջազգային իրաւական հարթութեան վրայ աւելի է արդարացում նման մի քայլ՝ այն պետութիւնների կողմից, որոնք դերակատար են Միջին Արեւելքում, բայց եթէ սա էլ չի թոյլատրում, ուրեմն մեզ ձեռնտու է, որ միայն ունենանք մեր իրանցի բարձրագոյն հայ հոգեւորականը:

Յօդուած 33-ում նշուած է պատգամաւորական ժողովի պարտականութիւնները եւ իրաւասութիւնները, ը-բաժինում կարդում ենք. «...ընտրում է Ազգային ընդհանուր ժողովի եւ կաթողիկոսի ընտրութեան ժողովի պատգամաւորները»:

Ի՞նչ է նշանակում «Ազգային ընդհանուր ժողով», երեւի աւելի ճիշտ կը լինի ասել «Յ.Յ.Դ ընդհանուր ժողով»: Ովքե՞ր են այդ «Ազգի տիտանները» որ յանդգնում են համայն հայութեան խնդիրները լուծել, բայց չեն կարողանում մեր փոքրիկ համայնքի համար ճիշտ լուծումներ գտնել, եւ աւելին՝ որ չեն կարողանում Հայաստանի պատգամաւորական ընտրութիւն-

ների արդիւնքում, քէների 5-տոկոսի շեմից անցնել, ո՞ւմ հաշիւն է ծախսուում այս նպատակի համար ազգի դրամները, երբ մեր համայնքում դեռ գոյութիւն ունի ժողովրդի խեղճ ու կրակ մի հատուած, որ նոյնիսկ օրւայ հացին է կարօտ:

Յօդուած 45-ը բացատրում է «հաշիւքննիչ մարմնի» պարտականութիւնները, բայց չի նշում, որ եթէ ինչ-որ «Ազգի գող» է գտնուում, ի՞նչ վերաբերմունք պէտք է ցուցաբերել նրա նկատմամբ, երեւի պէտք է խրատել նրան, որ այլեւս նման քայլի չդիմի: Ոչ, սիրելիներ, սոյն մարմինը պիտի ուղղակիօրէն զեկուցի պետութեան համապատասխան մարմիններին որպէսզի յանցագործը դատւի օրէնքի սահմաններում, մենք այս պայմաններում ոչ այդքան հարուստ ենք եւ ոչ էլ անցեալի նման մեծ բարերարներ եւ նւիրատուներ ունենք, որ կարողանանք փոխհատուցել նման դրամական ու կալւածական կորուստներ, եւ ոչ էլ իրաւունք ունենք աչքաթող անել Ազգի հարստութիւնը:

Իրանահայութեան վերջին վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ Իրանում բնակուում են մօտ 50000 հայեր, որոնք հիմնականում Թեհրան, Նոր Ջուղա (Սպահան), Շահինշահր, Թաւրիզ քաղաքներում են հաստատուած, ելնելով այն իրողութիւնից, որ ազգային կալւածատնտեսական եւ բիւջետային մեծ բացեր են գոյացել բոլոր թեմերում եւ ներկայիս ազգային հսկայածաւալ կառուցւածքով շարունակելը, անկումային հեռանկար ունի, ուրեմն մեր ապագայ ռազմավարութիւնը պէտք է հիմք ընդունի «նոր ազգային կառուցւածք» կերտելու տեսլականը:

21-րդ դարում հեռակառավարման բարդ խնդիրները լուծուում են համակարգչային եւ ինտերնետային համացանցի միջոցով, ուրեմն նման մի գործելակերպ որդեգրելը պատճառ կը դառնայ մեծ մի-

թական զեղչերի եւ խնայողութիւնների, եւ Նոր Ջուղան ունենալով հարուստ պատմական մի անցեալ եւ աշխարհագրական առումով տեղակայուած Սպահան կենտրոնական քաղաքում, արժանի է լինել «Իրանի համայնքային խորհրդի» կրօնավարչական կենտրոն, սոյն «համայնքային խորհուրդը» պիտի ունենայ իր կանոնադրութիւնը եւ ընտրւի ժողովրդի ուղիղ քէով, այս դէպքում մեր 3 թեմերը կը միաձուլւեն մէկ մարմնի մէջ եւ կառաջնորդւեն նոր համակարգով:

Բայց ինչ վերաբերում է Իրանի խորհրդարանում մեր գոյգ հայ պատգամաւորներին, պէտք է ինչ-որ ձեւով նրանց ներառել սոյն խորհրդում, այն էլ վճռական ծայնի իրաւունքով, որպէսզի նրանք աւելի մատչելի ձեւով ծանօթացնեն եւ լուծելի դարձնեն մեր ազգային խնդիրները Իրանի պետական համապատասխան այրերի միջոցով: Դիտել տանք որ, մինչ օրս նման մի յօդուած չի նախատեսւել մեր համայնքի կանոնադրութիւնում, երեւի սա էլ նպաստաւոր չի եղել կուսակցութեան համար:

Այնուամենայնիւ պէտք է համոզել եւ համոզել մեր անկեղծ մտաւորականներին, որ մեր համայնքի բոլոր դժարութիւնները հիմնականում բխում են Հ.Յ.Դ կուսակցութիւնից, որը մեր շրջանում հանդիսանում է թէ օրէնսդիր, թէ գործադիր եւ թէ դատական մարմին:

Ծանօթ.

Մենք ձեռքի տակ ենք ունեցել Սպահանի հայոց թեմի 48-րդ պատգամաւորական ժողովի վաւերացւած կանոնադրութիւնը, եւ առաջնորդւել դրանով:

Սեպտեմբեր 2012

ԳԻՄՐԻՆ ՓՈՔ

Մինչ Գիւմրին այցելելը, Յայաստանի երկրորդ քաղաքի մասին մտածում էի որպէս մի փոքր Երեւան, սակայն, նոյնիսկ կարճ մի շրջագայութեամբ քաղաքի փողոցներում անհետանում է այդ թիրիմացութիւնը: Գիւմրին, որի անունները (Կունայրի, Ալեքսանդրապոլ, Լենինական եւ կրկին Գիւմրի) արդէն վկայում են նրա պատմութեանը, իր ամէն ինչով տասնիններորդ դարի ռուսական կայսրութեան մի քաղաք է: Մեզ այսօր ծանօթ Երեւանը հիմնականում ծնւաւորել է սովետական շրջանում, մինչդէռ Գիւմրին նախասովետական շրջանում արդէն ռուսական Անդրկովկասի կարեւոր քաղաքներից էր համարում: Գիւմրին իր ճարտարապետութեամբ

բաւականին տարբերում է Երեւանից: Տուֆէ վարդագոյն քարով բազմայարկանի եւ բակերի շուրջ կառուցած բնակարանային համալիրների փոխարէն՝ այստեղ կան տեղական սեւ շինանիւթով կառուցած երկյարկանի շէնքեր:

Գիւմրիի հէնց մուտքում քաղաքի թանգարանում ներկայացւած է քաղաքի կենցաղը եւ արհեստների զարգացած մակարդակը տասնիններորդ դարում:


Թանգարանի շէնքը Արեւմտահայաստանից Գիւմրի գաղթած հարուստ տոհմի բնակավայրն է եղել, եւ սենեակները պահւել են հնարաւորին չափ ժամանակի ոճով, որը ըստ երեւոյթին չի զիջել տասնիններորդ դարւայ

եւրոպական կենցաղային ոճին: Թանգարանում ցուցադրւել են նաեւ իրեր, որոնք վկայում են տասնիններորդ դարում քաղաքում դարբնութեան, մետաղաձուլութեան, արծաթագործութեան, դերձակութեան, կօշկակարութեան եւ այլ արհեստների զարգացման մասին: Թանգարանի պատերը զարդարւած են Գիւմրիի անւանի նկարիչ Յակոբ Անանիկեանի նկարներով (տես էջ 10):

Մի բանով, որն ի դէպ ոչ այնքան դրական, Գիւմրին նմանում է Երեւանին, այն է, որ քաղաքի կենտրոնական ընդարձակ հրապարակում իրար են խառնւած պատմական յուշարձանները եւ արդի սպառողական ապրանքներ գովազդող մեծ ցուցատախտակները: Ասենք «Սամսունգ»-ի հսկայ յայտարարութիւնը Վարդան Զօրավարի արձանի տեսարանի խորքում:

Գիւմրիի այցելութիւնը լրացնում է Երեւանից ստացած պատկերը՝ Յայաստանի պատմութեան եւ մշակոյթի մասին:

Ռ.Ս



ՔՐ ԵՐԵՒԱՆ ԶԷ



ԳԻՄՐԻԻ ԱՆԻԱՆԻ ՆԿԱՐԻՉ՝ ՅԱԿՈԲ ԱՆԱՆԻԿԵԱՆԸ

Նշանաւոր նկարիչ Յակոբ Անանիկեանը ծնւել է 1919 թւականին Գիւմրիում եւ մինչեւ 1960-ական թւականները ապրել եւ ստեղծագործել է իր ծննդավայրում: Այս ժամանակ նա տեղափոխւել է Երեւան, որտեղ եւ նրա իւրայատուկ նկարչական ոճը ձեւաւորուում է: Նրա գործերում գերիշխում է կարօտը, իր հայրենի քաղաք Գիւմրիի նկատմամբ՝ իր արհեստանոցներով, դուղուկահարներով, երգիչներով, սայլորդներով: Գիւմրին կառուցւած է հիմնականում տեղի սել քարով: Սելը տիրապետող է դարձել նաեւ քաղաքի կենցաղում: Նոյն մթամած գունային մթնոլորտն է իշխում եւ Անանիկեանի կտաւներում:



ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գիւմրիի զարգացման ամենանշանակալից շրջանը դարձաւ XIX դարը, երբ իր շրջակայքով 1804 թւականին, ռուս-պարսկական առաջին պատերազմի ժա-

մանակ այն մտաւ Ռուսաստանի կազմի մէջ, այսինքն մօտ քառորդ դար աւելի վաղ քան ողջ Արեւելեան Հայաստանը: Այդ ժամանակ նա դարձաւ Անդրկովկասի նշա-

նաւոր քաղաքներից մէկը:

1829 - 30 թւականներին Արեւմտեան Հայաստանից՝ Կարսից, Էրզրումից, Բայազետից եւ այլն հարիւրաւոր ընտանիքներ ներ-



գաղթեցին եւ մշտական բնակութիւն հաստատեցին Գիւմրիում, որի հետեւանքով քաղաքը դարձաւ համեմատաբար բազմամարդ:

1837 թականին Ռուսաստանի կայսր Նիկոլայ Առաջինը, ժամանելով Գիւմրի, քաղաքը կոչում է իր կնոջ՝ կայսրուհի Ալեքսանդրիա Ֆեօդորովնայի անունով՝ Ալեքսանդրապոլ, որը ժողովուրդը երբեմն անւանել է նաեւ Ալեքպոլ: 1840 թականին Գիւմրին յայտա-

դերձ, շուտով դարձաւ նաեւ առեւտրի եւ արհեստագործութեան նշանակալի կենտրոն, իսկ դարավերջին՝ 1899 թ. Թիֆլիս - Ալեքսանդրապոլ, այնուհետեւ Ալեքսանդրապոլ-Երեւան երկաթուղիների կառուցումը, որը 1906 թ. շարունակեց մինչեւ Ջուլֆա, ապա Թաւրիզ, քաղաքը դարձրեց երկաթուղային կարելոր հանգուցներից մէկը: Դա մեծ բեկում մտցրեց նրա սոցիալ-տնտեսական եւ մշակութային կեանքում:

որը, որոնց համբաւը տարածել էր երկրով մէկ: Արհեստաւորների մեծագոյն մասը ներգրաւած էին համաքրութիւնների մէջ, որոնք պահպանեցին մինչեւ XX դարի սկիզբը: Քաղաքի կեանքում կարելոր նշանակութիւն էր ստացել տնայնագործութիւնը: Շուտով ստեղծեցին գարեջրի, օճառի եւ կաշի ձեռնարկութիւններ: Մեծ վերելք ապրեց առեւտուրը: Քաղաքում կային բազմաթիւ խանութներ, մանր ու մեծ կրպակներ,



րարւում է քաղաք, իսկ 10 տարի անց՝ 1850 թականին, դառնում էրեւանի նահանգի Ալեքսանդրապոլի գաւառի կենտրոնը: Քաղաքը գլխաւոր պրիստաւի (գաւառապետի) աթոռամիստն էր, Անդրկովկասի ռուսական զօրքերի կարելոր աւան-պոստը: Այստեղ հիմնեցին ռազմական ամրութիւններ, զինուորական աւաններ (Պոլիգոններ, Սեւերսկի, Կազաչի պոստ):

Ալեքսանդրապոլը սահմանային բերդաքաղաք լինելով հան-

Ալեքսանդրապոլը նախասովետական շրջանում առաջին հերթին արհեստաւորական քաղաք էր, ուր 1850-1860 թականների արհեստաւորների թիւը կազմում էր աւելի քան 5 հազար մարդ: Առանձնապէս տարածած էին շինարարական-մետաղամշակման արհեստները, որոնք մադրութիւնը, քարտաշութիւնը, ատաղձագործութիւնը, դարբնութիւնը, պղնձագործութիւնը, անագագործութիւնը եւ այլն: Յատկապէս յայտնի էին քարտաշներն ու որմնադիրներ-

շուկաներ: Քաղաքի տնտեսական զարգացման հետ միասին խոշոր չափերով սկսեց աճել նաեւ ազգաբնակչութիւնը:

XIX դարի վերջին Ալեքսանդրապոլն ուներ 32 հազար բնակիչ, Թիֆլիսից ու Բաքուից յետոյ համարւում էր երրորդ առեւտրական եւ մշակութային կենտրոնն Անդրկովկասում: Այդ ժամանակներից քաղաքն ուներ մօտ 10 դպրոց ու վարժարան: Աջքի էին ընկնում Արղութեան (արական) եւ Սահականուշեան (օրիորդաց) վարժա-

րանները, ուր հայերէնից բացի սովորում էին ռուսերէն, լատիներէն եւ յունարէն: Կային նաեւ մասնաւոր վարժարաններ:

Քաղաքը յայտնի էր իր դպրոցներով, գուսաններով, ժողովրդական երգիչներով (Ջիւանի, Շերամ, Ֆահրագ, Յայաթ եւ ուրիշներ): Տրւում էին թատերական ներկայացումներ: Առաջին անգամ Յայաստանում, 1912 թ. այստեղ է բեմադրուել Ա. Տիգրանեանի

«Անուշ» օպերան:

Սովետական կարգերի հաստատմամբ Ալեքսանդրապոլում արագ թափով սկսեց զարգանալ արդիւնաբերութիւնը, գիտութիւնն ու մշակոյթը: Մինչեւ 1930-ական թւականների սկիզբը քաղաքը մնում էր որպէս գաւառի կենտրոն: 1924 թւականին Վ. Ի. Լենինի մահից յետոյ Ալեքսանդրապոլը անւանեց Լենինական:

Յայաստանի անկախացման

տարիներին քաղաքը կրկին վերանւանեց Գիւմրի:

Օգտագործուել են տեղեկութիւններ «Լենինական» ուղեցոյցից՝

(Լենինական, ուղեցոյց, Վագդէն Ազատեան, ՅԿԿ Կենտրոնի հրատարակչութիւն. Երեւան, 1989 թ.)

ԳԻՄՐԻԻ ԱՆԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Գիւմրին գտնւում է Երեւանից (Յայաստանի Յանրապետութեան մայրաքաղաք) 126 կմ տարածութեան վրայ, Շիրակի բարձրաւանդակի կենտրոնական մասում, ծովի մակարդակից 1550 մ բարձրութիւն ունեցող հարթավայրում, Յայաստանի հիւսիս-արեւմուտքում, Ախուրեան գետի ձախ ափին:

Տարածքը կազմում է 3626 հեկտար:

Քաղաքի մօտով հոսում է Յայաստանի Յանրապետութեան ջրառատ գետերից մէկը՝ Ախուրեանը:


Շրջակայքը հարուստ է շինանիւթերով՝ տ ու լ -

Ֆոլ, բազալտով, դիատոմիտով, կաւով, ինչպէս նաեւ սելահողային արգաւանդ դաշտերով:

Ընդհանուր առմամբ Գիւմրիում կլիման ցամաքային է: Ձմռանը երբեմն ուժեղ սառնամանիքներ են լինում: Օդի նւազագոյն ջերմաստիճանը իջնում է մինչեւ 41-ի: Ամռանը համեմատաբար շոգ է, սնդիկի սիւնը հասնում է մինչեւ 36 աստիճանի, տարեկան տեղումները միջին հաշուով կազմում են 500 մմ, գտնւում է 8-9 բալանոց

սեյսմիկ գօտում:

«Ձիթոցենց տուն» անւանաւոր հնօրեայ այս շէնքը Գիւմրու ժողովրդական ճարտարապետութեան եւ քաղաքային կենցաղի թանգարանն է: Երկրաշարժերին դիմադրած այս կառոյցը, տեղի շինարարական արւեստի սքանչելի նմուշներից է:




Ռ՛Վ Է ՉԱԼՈՒՄՑ ԳԻԼԲԵՆԿԵԱՆԸ

1917 թ. բռնկված ռուսական յեղափոխութիւնը դարձաւ համատարած սովի պատճառ, որից փրկւելու միակ յոյսն Արեւմուտքն էր: Ռուսաստանը տարադրամի կարիք ունէր՝ ժողովրդին կերակրելու եւ տնտեսութիւնը ոտքի կանգնեցնելու համար, ուստի որոշում ընդունեց երկրի բուրժուական յորջորջւած հսկայական հարստութիւնը՝ արւեստի գործերը, ցարական ունեցւածքը, ամբողջական պալատները արեւմտեան երկրներին ու ԱՄՆ-ին վաճառելու մասին: 1929 թականին հերթը հասաւ Էրմիտաժին: Վաճառքի հանւած արժեքներն սպառուում էին ակնթարթօրէն, եւ այդ ամէնը երկրից «արտահոսում էր» ուղղակի ջրի գնով: Էրմիտաժի հարստութեան գնորդներից էր այն ժամանակ արդէն նաւթային մագնատի համբաւ ձեռք բերած եւ արւեստի գործերի հրաշալի հաւաքածու ունեցող Գալուստ Գիլբենկեանը:

Նա նաւթի վաճառքով զբաղւող իր գործընկերներին դիւանագիտօրէն համոզում էր արեւմտեան շուկայում իրացնել նաեւ ռուսական նաւթը՝ այդպիսով Ռուսաստանի համար ապահովելով այնքան անհրաժեշտ տարադրամը, իսկ իր համար՝ Էրմիտաժից առաջինը գնումներ կատարելու իրաւունքը: Չորս յաջողւած գործարքների շնորհիւ Գիլբենկեանն իր հաւաքածուն հարստացրեց 18-րդ դարի ֆրանսիացի վարպետների գործերով, «Դիանայի» քանդակով, որը ժամանակին պատկանել էր անձամբ Եկատերինա թագուհուն, շատ էժան ձեռք բերեց նաեւ մի քանի բարձրարուեստ կտաւ:

Ամբողջ այս հարստութիւնը հետագայում պէտք է հանգրւանէր նրա՝ աւելի քան 60 տարւայ ընթացքում կուտակած անձնական հաւաքածուի բազմաթիւ նմուշների կողքին, իսկ մահւանից 14 տա-



րի անց ցուցադրւել Լիսաբոնում բացւած եւ իր անունը կրող թանգարանում, որը աշխարհի լաւագոյն թանգարաններից է:

Սակայն Գիլբենկեանի համաշխարհային փառքն ու անունն առնչւում են մէկ այլ առաքելութեան հետ, որը մանկուց էր կանխորոշւած:

1869 թականի Մարտի 23-ին Կոստանդնուպոլսի Սկիւթար թաղամասում յաջողակ եւ ունեւոր գորգավաճառ Սարգիս Գիլբենկեանի ընտանիքում ծնւում է առաջնեկ որդին՝ Գալուստը: Նրանից գոհ սուլթանը, որպէս շնորհակալութիւն՝ ճարպիկ վաճառականին նշանակում է սեւծովեայ Տրապեզունդ նաւահանգստի կառավարիչ: Նաւահանգիստը իւրօրինակ կամուրջ էր Ռուսաստանի եւ Փոքր Ասիայի միջեւ, ուստի ձեռներեց գործարարն առիթը բաց չի թողնում զբաղւելու նաեւ Ռուսաստանից Օսմանեան կայսրութիւն ներկրող նաւթի վաճառքով: Հօր հարստութիւնը Գալուստի համար փայլուն կրթութիւն ստանալու հեռանկարներ է բացում: Նախնական ուսումն ստանում է Գատըզիւղի Արամեան-Ունճեան դպրոցում, ապա «Սուրբ Յովսէփ» ֆրանսիական վարժարանում: Այնուհետեւ

ֆրանսերէնը կատարելագործելու համար սովորում է Մարսէլի երկրորդ կարգի դպրոցում, յետոյ՝ Լոնդոնի Թագաւորական քոլեջի ճարտարագիտութեան բաժնում, որն աւարտում է 1887-ին՝ փայլուն գնահատականներով եւ բարձրակարգ ճարտարագէտ-նաւթարդիւնաբերողի որակաւորմամբ: Այնուհետեւ հայրը որդուն ուղարկում է Անդրկովկաս՝ ուսումնասիրելու Բաքւի քարիւղի հանքերը: Այս ճամփորդութիւնը «նաւթային գործի» սիրահարին առիթ է ընձեռնում հեղինակելու լուրջ մի աշխատութիւն՝ Միջին Արեւելքի նաւթային պաշարների շահագործման եւ մշակման վերաբերեալ, ինչպէս նաեւ զանազան յօլւածներ հրատարակել ու փարիզեան «Revue des Deux Mondes» թերթում: 21 տարեկանում Գիլբենկեանը համարւում էր նաւթային հարցերի առաջնակարգ փորձագէտ՝ ողջ աշխարհում: Եւ պատահական չէ, որ նրա վրայ ուշադրութիւն է բեւեռում Օսմանեան կառավարութեան հանքերի նախարարը՝ խնդրելով մի տեղեկագիր պատրաստել կայսրութեան եւ Միջագետքի քարիւղի հանքերի մասին: Բանիմաց երիտասարդը բաւականին համոզիչ տեղեկագիր է պատրաստում, որով ապացուցում է, որ կայսրութեան տարածքները հսկայական նաւթային ներուժ ունեն: Բանեցրած դիւանագիտութեան շնորհիւ նա մի քանի մեծահարուստ նաւթարդիւնաբերողների համոզում է գումարներ ներդնել՝ այդ հանքերի շահագործումը կազմակերպելու համար: Աւելին՝ Գիլբենկեանը որոշում է հօր տւած 30000 ֆունտ ստերլինգ դրամագլխով միանալ նրանց եւ սեփական գործ սկսել: Իսկ դրա համար նախ հարկաւոր էր ազդեցիկ կապեր ձեռք բերել: Այդ նպատակով մեկնում է Լոնդոն եւ այնտեղ եռանդուն գործունէութիւն ծաւալելու

շնորհիւ նոր ծանօթութիւններ հաստատում, բանակցութիւններ վարում ու պայմանագրեր կնքում: Այդպէս մեկնարկում է Միջագետքի նաւթի հանքերի մշակման դարաշրջանը, ինչպէս նաեւ Գիւլբենկեանի գլխապտոյտ վերելքը՝ փառքի աստիճաններով:

Անգլիայում նա հանդիպում է կեանքի ընկերուհուն՝ Նւարդ Եսայեանին: Նւարդը հայկական ազնւական ընտանիքից էր, շատ խելացի, կենսուրախ մի կին, ով ողջ կեանքում մնաց ամուսնու կողքին՝ որպէս հաւատարիմ նեցուկ:

1896 թւականին ծնւեց նրանց առաջնեկը՝ Նուբարը: Այդ ժամանակ ամուսինները դեռ թուրքիայում էին, սակայն համիդեան ջարդերի պատճառով լքեցին երկիրը՝ հաստատուելով Լոնդոնի կենտրոնում:

Տեղափոխուելով Եւրոպա՝ երիտասարդ գործարարն առաւել մեծ աւելումով է սկսում զբաղւել նաւթային գործերով: Այդ տարիներին նա իր ուժերը ներդնում է երկու խոշոր գործընկերների՝ Օսմանեան կայսրութեան եւ Անգլիայի շահերը պաշտպանելուն՝ երկար ժամանակ նրանց համար ապահովելով Միջագետքի նաւթ շահագործելու մենաշնորհը եւ ինքն էլ ունենալով իր հասանելիքը: Սակայն Առաջին համաշխարհայինի նախաշեմին արաբական նաւթի հանդէպ յաւակնութիւններ է ներկայացնում Գերմանիան: Անգլիացիները խնդրում են Գիւլբենկեանին բանակցութիւններ վարել Գերմանիայի հետ՝ նաւթահանքերի նրա մասնաբաժինը հնարաւորինս կրճատելու նպատակով: Երկարատեւ բանակցութիւններով Գիւլբենկեանին յաջողում է համաձայնագրի նախագիծ կազմել, որը բաւարարում է բոլոր շահագրգիռ կողմերին:

Պատերազմի ավարտից յետոյ, երբ փլուզւել էր Օսմանեան հսկայական տէրութիւնը, եւ Գերմանիան էլ խաղից դուրս էր մնացել,

Գիւլբենկեանը ստիպած էր նոր բանակցութիւններ սկսել հին եւ ասպարէզում յայտնւած նոր գործընկերների հետ: Պատերազմում յաղթանակած Ֆրանսիան Միջին Արեւելքի քարիւղի պահեստների տիրակալներից մէկը դառնալու նոր յաւակնորդերի թում էր: ԱՄՆ-ը նոյնպէս աչք էր դրել Միջագետքի եւ յատկապէս՝ Զիւսիսային Իրաքի քարիւղի հանքերի վրայ: Եւ Գիւլբենկեանի շնորհիւ, թուրքական նաւթային ընկերութեան կազմաւորումից 14 տարի անց, նոր համաձայնագիր է կազմւում (պատմութեան մէջ յայտնի է «Կարմիր գծի» համաձայնագիր անունով) նորաստեղծ Իրաքեան նաւթային ընկերութեան շրջանակներում, որի բաժնեթղթերը կիսւում են նախկին անգլիական եւ անգլո-պարսկական, նոր ֆրանսիական ու ամերիկեան ընկերութիւնների միջեւ, որոնք էլ դարձան քարիւղի ապագայ հսկաները: Զետաքրքիր է, որ այս դէպքում եւս պահպանւեց ընդհանուր դրամազլխից Գիւլբենկեանին հասանելիք 5 տոկոսը, որի համար նրան սկսեցին կոչել «պարոն 5 տոկոս», եւ որը բազմապատկեց նրա միլիոնները:

Սակայն հարստութիւնը նրա համար թշւառներին, կարիքաւորներին ու դժբախտութեան մէջ յայտնւածներին ձեռք մեկնելու միջոց էր, ինքն անձամբ չէր սիրում անտեղի զոււարներ վատնել, եթէ խօսքն իհարկէ չէր վերաբերում արւեստի հերթական գործը ձեռք բերելուն: Լինելով շատ խնայող ու ժուժկալ մարդ սեփական ընտանիքում՝ նա զոււարներ չէր խնայում թուրքիայի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Յորդանանի հայկական համայնքներին առատաձեռն նւիրատութիւններ անելու համար: Զամբաւաւոր հայ մեծահարուստը մեծ զոււարներ է ներդրել նաեւ Երուսաղէմի պատրիարքարանի, Կ. Պոլսի «Սբ. Փրկիչ» հիւանդանոցի եւ Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման, ինչպէս

նաեւ Երեւանի ծայրամասում կառուցւած Նուբարաշէն եւ Նոր Կեսարիա թաղամասերի շինարարութեան գործում:

Կեանքի վերջին տարիներին Գիւլբենկեանը բնակութիւն է հաստատում Պորտուգալիայում՝ իր համար ժամանակաւոր կացարան դարձնելով լիսաբոնեան «Աւիզ» շքեղ հիւրանոցի համարները: Զաւատարիմ քարտուղարի ուղեկցութեամբ զբօսանքները նրա ամուսնուրեայ արարողութիւններից էին: Դրանց միակ անյարմարութիւնը Գիւլբենկեանի աճող հոշակն էր. նա ասես Լիսաբոնի տեսարժան վայրերից լինէր. բոլորը ուզում էին զոնէ հեռուից տեսնել աշխարհի ամենահարուստ մարդուն, իսկ երեխաները համարձակութիւն էին ունենում մօտենալ, շրջապատել ու ամենատարբեր հարցերով անհանգստութիւն պատճառել հանգստացող ծերունուն: Սակայն Գիւլբենկեանը նրանց դէմ պայքարելու սեփական՝ զուտ «գիւլբենկեանական» եղանակն ունէր. երեխաներին թոյլատրում էր կողքին գտնւել միայն այն պայմանով, եթէ լուռ մնան: Այդ լռութեան համար իւրաքանչիւրը մէկական մանրադրամ էր ստանում:

Կեանքի մայրամուտին՝ 81 տարեկանում զրկւում է հաւատարիմ կողակցից: Դա նրան ստիպում է մտածել կտակի մասին, որում ցանկութիւն է յայտնում Լիսաբոնում յատուկ ֆոնդ ստեղծել՝ Եւրոպայով մէկ ցրւած իր հաւաքածուի բոլոր մուշները՝ իր բոլոր «զաւակներին» մէկտեղելու համար: Ֆոնդին նա կտակում է 2,6 միլիարդ դոլար եւ 102 միլիոն բիւջէով տարեկան շահոյթ: 2 տարի անց՝ 1955 թւականի Յուլիսի 20-ին, իր օթեւանած հիւրանոցում էլ դարի մեծագոյն մարդկանցից մէկը հրաժեշտ է տալիս կեանքին: Նրա վերջին հանգրւանը դառնում է իր միջոցներով Լոնդոնում կառուցւած Սբ. Սարգիս եկեղեցին:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԹԱՏՐՈՆԻ ՀԵՏԵՐՈՎ Գրիգոր Յ. ԴԱԼԹԵԱՆ (1924-1955)

Նիկիտ Միրզայեանց

Գրիգոր Դալթեանի հայրը՝ Յովսէփը, եղել է Ն. Զուղայի ազնւական տոհմից սերած, Դաւիթ Քալանթար (Քաղխուղա)-ի տղան, իսկ ինքը զաւակն է Յովսէփի, երբ նա իր պատկառելի տարիքում պսակուում է իր երկրորդ կնոջ՝ Զայքնուշի հետ: Գրիգորի խորթ եղբայրները եղել են՝ Դաւիթը (բժիշկ Վիենայում), Եղիան⁽¹⁾, Գեորգը եւ դուկտ. Զարմիկ Դալթեանը⁽²⁾:


Գրիգորը ծնւել է Ն.Զուղայում 1924 թ., հէնց փոքր տարիքից սիրել է դերասանական արւեստը եւ երաժշտութիւնը, տաղանդաշատ այս տղան ծնւած օրից տառապել է սիրտանօթային հիւանդութիւնից, բայց այնուամենայնիւ իր

տաղանդով եւ ինքնաշխատութեամբ սովորել է նւագել բանջօ, մանդոլին եւ քլառինէթ: Աշխատել է որպէս ոսկերիչի աշակերտ եւ հմտացել նաեւ այս ասպարէզում:

Սէրը դէպի թատրոնը նրան մղել է այս բնագաւառում դրսեւորել իր տաղանդը, եւ մասնակցել է տարբեր բեմադրութիւնների, բնութագրական դերերով, այդ թւում՝ «Օթելլօ», «Պատուի համար», «Նամուս», «Անուշ», «Լէյլի ու Մաջնուն», «Արշին Մալալան», եւ «Չասան փինաչին», որ վերջինիս հեղինակը հէնց ինքն է եղել, դեռ ջուղայեցիների յուշերում կենդանի է նրա մանդոլինի հնչեղութեամբ կատարած «ես հասանն եմ փինաչի, քեֆս իսկի պակաս չի» վոդ-

կիլը, որը ամէն մի տօնական առիթով, եւ տարբեր խնջոյքներում իր դերակատարութեամբ, յուզել ու ուրախութիւն է պարգեւել ժողովրդին:

Դ ժ բ ա խ -
տաբար մեզ
չյաջողւեց
գտնել թա-





ամայի թատերաբեմերում:
Յարգանք իր յիշատակին:
Յուլիս 2012 Նոր Ջուղա

Ծանօթ

1) Եղիա Վելիջանեան-Դաւթեան (1889-1976), Իրանի առաջին սկաուտապետը, նկարիչ:

2) Հարմիկ (Յարութին) Դաւթեան (1924-2009): Իրանի արդի հոգեբուժութեան հիմնադիր, ակադեմիկոս:

3) Միքայէլ Կոստանեան հանրաճանաչ դերասան, բեմադրիչ(1880-1955): Նա իր կնոջ՝ Մարգոյի հետ Թիֆլիսից Պարսկաստան գալով (1921), առաջին անգամ Սիրանոյշի խմբի մէջ Ն.Ջուղայում, մի շարք ներկայացումներ են կազմակերպում, յետոյ հիմնում են «Կոստանեան թատերախումբ» եւ ներկայացումներ տալիս Թեհրանում Ռեշտում, Էնզելիում, եւ Խուզիստանում: Միքայէլը մահացել է Ահազում գնացքի մէջ, Հնդկաստան իր տղային այցից վերադարձի ճանապարհին, իսկ կինը՝ 1955թ., Աբադանում:

4) Կարօ Մինասեան (1897-1973) բժիշկ, հնագէտ, գրող:

տերական այն արխիւը , որի յայտագրերը մեզ աւելի մանրամասն տեղեկութիւն կը հաղորդէր Գրիգոր Դ.-ի խաղացած բնութագրական դերերի եւ ժամանակագրական տւեալների մասին, այն լուսանկարներն էլ, որ ձեռք ենք բերել, պատկանում է իր քրոջ՝ Հրանուշի որդուն՝ ջուղայաբնակ Կարօ Դաւթեանին, ում նախապէս յայտնում էնք մեր խորին շնորհակալութիւնը: Այս լուսանկարներից ամենահետաքրքիրը Միքայէլ Կոստանեանի⁽³⁾ հետ նկարած Գրիգոր Դ. է, որը հիմք է ծառայում ենթադրել, որ Գրիգորը մասնակից է եղել նրա բեմադրութիւններին Աբադան քաղաքում եւ միգուցէ նաեւ Ն. Ջուղայում :

Միջանկեալ պէտք է այստեղ խոստովանել, որ Ն.Ջուղայի Ամենափրկիչ վանքի արխիւային որոշ բաժինները այդ թւում թատերականը, գտնուում է ոչ բարւօք վիճակում, եւ մինչ օրս չի թւայնացել եւ չի կարգաւորել, շատ ենք ասել, յիշեցրել ազգային մարմիններին, բայց աւաղ«Ձայն բարբառոյ յանապատի» :

Ասում են, երբ Գրիգորը սրտի սուր ցաւեր էր զգում, իրեն այցելութեան էր գալիս հանրաճանօթ

բժիշկ, Կարօ Մինասեանը⁽⁴⁾ եւ ամէն անգամ դեղատոմս կարգադրելիս, Գրիգորի մայրը որպէս փոխհատուցում, արժէքաւոր եւ հնատիպ գրքեր էր նւիրում նրան:

Դժբախտբար, այս նւիրները չկարողացան փրկել տաղանդաւոր դերասանին , եւ Գրիգորը 31 տարեկան հասակում յաւերժ հեռացաւ թատերական բեմից:

Այժմ նրա խռովեալ հոգին է թւածում, մերօրեայ Ջուղայի



ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յոսեֆ Սամափուր



Այսօր, առաւել քան երբեք, գտնում են, որ գրականութիւնը եւ քաղաքականութիւնը իրենց էութեամբ տարբեր են, եւ նոյնիսկ հակադրուում են միմեանց: Քաղաքականութիւնը կենտրոնացում ու վանողականութիւն է քարոզում, այնինչ գրականութիւնը թէկուզ զայրոյթով ու ատելութեամբ համենւած լինի, խօսում է բազմազանութեամբ հանդերձ համերաշխութիւնից ու սրտակցութիւնից, ու երբեւիցէ չեն յիշում գրական լաւ երկում եղած դառնութիւնների պատճառով, տւեալ երկից ու անգամ հեղինակից ինձ օտարացած զգամ: Գրական բազմաթիւ ստեղծագործութիւններ մեզ կապում են հեղինակների հետ, թէւ չենք կիսում նրանց մօտեցումներն ու հաւատա-քաղաքական համոզմունքները, եւ քիչ չեն այն գրողների թիւը, որոնց ստեղծագործութեանը հարազատ մնալու համար գերադասում ենք ինքը հեղինակից հեռու գտնուել:

Գրականութիւնն ինչի՞ց է խօսում քաղաքականութիւնի՞ց, հասարակութիւնի՞ց, իդէալների՞ց ու համոզմունքների՞ց: Ըստ երեւոյթին՝ այո՛, սակայն իրականում՝ ո՛չ. գրականութիւնը ներսից է խօսում, մարդկանց ներաշխարհից եւ այն ամէնից, ինչը նրանց առնչում է հասարակութեանը, քաղաքականութեանը, համոզմունքներին ու այլնին եւ դա, ընդհանուր առմամբ, տարբեր է այդ կատեգորիաների մասին խօսելուց: Գրականութիւնը ասում է թէ ինչո՞ւ ենք համոզւած այս կամ այն բանում, մեր սիրոյ եւ ատելութեան սկզբ-

նադիրները որո՞նք են եւ բնաւ սերն ու ատելութիւնը չի վերածում յայտարարութեան, դա քաղաքականութեան գործն է:

Գրականութիւնը նշում է, որ մարդը որքան բարդ արարած է, եւ ինչպէս է ապրում բարդ իրավիճակներում, եւ ինչպէս է սիրուց պատերազմին, ատելութիւնից չպատերազմելուն, հաւատից անհաւատութեան եւ անհաւատութիւնից հաւատամքին հասնում: Գրականութիւնը այդ ընթացքն է գծում, մեզ ծանօթացնելով մեր ու այլոց ներաշխարհի հետ, ի ցոյց դնելով, փոխըմբռման միջոցով խաղաղութեան հասնելու ճանապարհը:

Գրականութիւնը, եթէ նոյնիսկ ատելութեամբ գրւած լինի, ու եթէ, իրօք, գրականութիւն լինի, ապա ուրիշի ներաշխարհը ներկայացնելով, ի վերջոյ յանգում է մեր մէջ գոյութիւն ունեցող մարդու տեսակին: Հասկանում ենք, որ միեւնոյն ատելութեան սերմերը մեր մէջ էլ կան, ինչի՞ց են դրանք արմատաւորում ու ինչո՞վ աճում, ուստի նոյնիսկ եթէ այդ գրութիւնը չսիրենք, ապա ըմբռնումով ենք մօտենում տւեալ երկին ու հեղինակին ու մեզ էլ աւելի լաւ ենք ճանաչում, եւ այդպիսով, հեռանալով մօտենում ենք ուրիշի ներաշխարհին, ատելութեան ու սիրոյ միջոցով հասնում ենք մեզ ու մարդու եզակիութեանը, եւ դա իմ համոզմամբ, այսինքն՝ խաղաղութիւն, այսինքն՝ գիտակցում, եւ որ ուրիշը օտար չէ, քո տեսակից է՝ իր տարբերութիւններով ու իւրայատկութիւններով հանդերձ:

Իսկ քաղաքականութիւն, այսինքն՝ ես լինեմ, դու՝ ոչ, ես կարող եմ, դու՝ ոչ, ես ասեմ այս, դու՝ այն, այսինքն՝ միւսին վանելու համար կարմիր գծեր յորինել, ինքդ քեզ բարձր դասել եւ որոշում կայացնելու գահին բազմել: Քաղաքականութիւն, այսինքն՝ տարածութիւն, զանազան եղանակներով ու մասշտաբներով պատերազմի հրահրում:

Այս ամէնը ինձ յուշում են, որ քաղաքականութիւնը, լաւագոյն դէպքում, գրականութեան ճանապարհից մի կողմ է քաշում, որպէսզի իւրաքանչիւրն իր ուղիով ընթանայ, եւ ամէն մէկն իր գործն անի: Կարծում եմ, գրական մշակներից ոմանք, եթէ ենթադրել են որ կարելի է մէկը միւսի օգտին շահագործել, այժմ պարզ գիտակցեն, որ նրանց ուղիները այլ են, եւ իզուր չէ, որ գրող-դիւանագետների քիչ ենք հանդիպում, ինչպէ՞ս եւ դիւանագետ-գրողների քանակն էլ (եթէ լինեն), որովհետեւ իւրաքանչիւրը գիտի, որ մէկն իր էութեամբ խաղաղութեանն է ծառայում, միւսն իր էութեամբ պատերազմին:

Թարգմանեց՝ Նորվանը Աղբիւր՝ «Թաջրոբէ» ամսագիր

ՎԱՆ ԱՐՏԱՔԻՆԻ ՏՉԵՂՈՒԹԻՆԻՅ՝

Դիսմորֆոֆոբիան հոգեկան խանգարում է, որի ժամանակ մարդը չափից աւելի անհանգստացած եւ զբաղւած է իր մարմնի աննշան դեֆեկտով կամ առանձնայատկութիւնով, յայտնում է psychelp.am կայքը: Սովորաբար դա սկսւում է երիտասարդ կամ դեռահաս հասակում: Կանանց եւ տղամարդկանց մօտ՝ հանդիպելու յաճախականութիւնը նոյնն է: Համեմատած ուրիշ հոգեկան խանգարումների հետ, ուղեկցւում է ինքնասպանութեան մեծ ռիսկով: Հիւանդները կարող են բողոքել մի քանի որոշակի «դեֆեկտներից», մի «դեֆեկտից», անորոշ առանձնայատկութիւնից կամ արտաքին տեսքից ընդհանրապէս: Ընդ որում, տուժում են հիւանդի կեանքի կարելոր ուղղութիւնները՝ աշխատելու ունակութիւնը, հասարակութիւնում նորմալ ներգրաւումը, ինքն իրեն սպասարկումը: Այն դէպքերում, երբ այս գաղափարները ընդունում են զառանցանքային բնոյթ, կրիտիկայի կորստով եւ համապատասխան վարքագծով, նպատակայարմար է խօսել ֆիզիկական թերութեան զառանցանքի մասին:

Դիսմորֆոֆոբիան սովորաբար արտայայտւում է այն մարդկանց մօտ, ովքեր բաւականին քննադատաբար են մօտենում իրենց արտաքինին, չնայած նրանց արտաքինում նշանակալի դեֆեկտների բացակայութեանը եւ նրա, որ շրջապատը յատուկ ուշադրութիւն չի դարձնում կամ էլ ընդհանրապէս չի նկատում այդ «դեֆեկտները»:

Մարդկանցից շատերն են ուզում իրենց արտաքինի մէջ որեւէ բան փոխել կամ լաւացնել, սակայն դիսմորֆոֆոբիայով տառապող մարդիկ, ունենալով նորմալ, երբեմն նոյնիսկ շատ գրաւիչ արտաքին տեսք, համարում են, որ այն

աստիճանի տգեղ են, որ սկսում են խուսափել սոցիալական կոնտակտներից վախենալով, որ ծաղրի առարկայ կը դառնան: Նրանք դժարութեամբ են դիմում օգնութիւն ստանալու համար, այն պատճառով, որ ամաչում են եւ վախենում, որ իրենց չեն հասկանալ: Կանայք աւելի շատ են դիմում, քան տղամարդիկ:

Յաճախ շրջապատող մարդիկ, հիւանդութեան ախտանիշները ճիշտ չեն ընկալում, համարելով, որ դա յիմարութեան եւ մնացածից տարբերելու ցանկութեան արտայայտում է:

Հետազօտութիւնները ասում են, որ դիսմորֆոֆոբիայով տառապող մարդկանց մօտ 76%-ը, իրենց կեանքի ինչ-որ մի շրջանում, խորը դէպրեսիա են ապրում, ինչը բաւականին բարձր է ընդհանուր սովորական բնակչութեան սպասելիք 10-20%-ից: Դիսմորֆոֆոբիայով տառապողների մօտ 37%-ը սոցիալական ֆոբիա են ունենում եւ մօտ 32%-ը՝ օբսեսիւ-կոնուլսիւ խանգարում:

ԻՆՉՈՒ ԵՆԷ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԵՐԱՋՆԵՐ ՏԵՍՆՈՒՄ

Ուղեղի հոգեբանութեան եւ ֆիզիոլոգիայի նորագոյն հետազօտութիւնների շնորհիւ՝ գիտնականները փորձել են բացայայտել վատ երազների էութիւնը եւ նպատակը:

Բացայայտել է, որ սարսափելի երազը հանդիսանում է բացասական յոյզերի վերարտադրման միջոց:

Եթէ մարդն արթնանում է գիշերային մղձաւանջից, դա վկայում է յոյզերի կարգաւորման գործընթացի խանգարման մասին: Երազներն օգնում են մշակել վերջին ժամանակներում ապրած բոլոր բացասական յոյզերը, վախը եւ անհանգստութիւնը: Քնի ընթացքում ակտիւանում են ուղեղի այնպիսի մասեր, որոնք պատասխանատու են յիշողութեան եւ յոյզերի համար:

Աւելի յաճախ մղձաւանջեր տեսնում են մարդիկ, ովքեր գտնւում են ուժեղ սթրեսի վիճակում: Եթէ մարդը սարսափելի երազի ընթացքում չի արթնանում, նշանակում է, որ նրա ուղեղն ակտիւօրէն օգնել է բեռնաթափել հոգեկան աշխարհը եւ «մարսել» բացասական յոյզերը:

Մղձաւանջների մասին նոր պատկերացումներն օգնել են գիտնականներին ստեղծել աւելի նոր, ժամանակակից եւ արդիւնաւետ մեթոդներ այդ խնդիրը լուծելու համար: Մեթոդներից մէկը պատկերի փոփոխութիւնն է, երբ հիւանդն արթուն ժամանակ փորձում է յիշել մղձաւանջը եւ ինքը գիտակցօրէն փոխում է իրադարձութիւնների ընթացքը:



ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԱՐԵԱՅՐՈՒՔ ԸՆԴՈՒՆԵԼ

Սեպտեմբերը մաշկաբանների համար ուրախալի եւ հետաքրքիր ամիս է, մարդիկ վերադառնում են ծովափնեայ հանգստից, ոմանք՝ որոշ հիւանդութիւններ բուժած, իսկ ոմանք էլ՝ նոր հիւանդութիւններ ձեռք բերած: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց մաշկավեներաբան Յովհաննէս Յովհաննիսեանը:

Նրա փոխանցմամբ՝ ծովափնեայ հանգստից յետոյ բժիշկներին հիմնականում դիմում են տարբեր տեսակի այրածքներով եւ որոշ երկար ձգձգող խրոնիկ հիւանդութիւնների սրացմամբ:

Նման երեւոյթներից խուսափելու եւ հանգիստը հետագայում անհանգստութիւն չդառնալու համար մաշկաբանը խորհուրդ է տալիս արեւայրուքը ճիշտ ընդունել: Նրա փոխանցմամբ՝ կարելի է արեւհարել առաւօտեան մինչեւ ժամը 11-12.00-ը, ինչպէս նաեւ 16.00-17.00-ից յետոյ, քանի որ հէնց այդ ժամանակ է արեւը օգտակար առողջութեան, մասնաւորապէս՝

խորհուրդ չի տրուում արեւայրուք ընդունել, քանի որ այդ ժամանակ արեւի ճառագայթները ուղիղ ընկնում են մաշկի վրայ, աւելի շատ են թափանցում եւ մաշկը շատ են վնասում, ինչը վտանգաւոր է:

Արեւայրուք ընդունելուց առաջ պէտք է անպայման օգտագործել համապատասխան քսուկներ՝ հաշի առնելով, թէ որտեղ ես ընդունում արեւայրուքը: «Եթէ օրինակ Սեւ ծովի ափին ես արեւայրուք ընդունում, ուրեմն կարելի է օգտագործել արեւապաշտպան քսուկ՝ SPF 30 ֆակտորով, դա բաւարար կը լինի, իսկ եթէ Սեւանում, ապա այնտեղ SPF 45-50 է պէտք, որպէսզի այրածքներ չառաջանան», - նշեց նա:

Պաշտպանիչ քսուկը օգտագործելուց յետոյ արեւայրուքը չպէտք է ընդունել միանգամից եւ երկար ժամանակով, այլ աստիճանաբար: «Կարելի է սկսել օրական 10-15 րոպէից եւ շարունակել երկարացնել օրական մի քանի ժամ, այսինքն՝ արեւայրուքի առաջին օրը չպէտք է շատ երկար մնալ», - ասաց նա:

Մաշկաբանի խօսքով՝ լաւ արեւայրուք ընդունելը պայմանաւորաւոր է թէ մաշկի տեսակից, թէ օգտագործած

տեսալ վայրի կլիմայից, բայց իհարկէ ամէն ինչ ճիշտ անելու դէպքում հնարաւոր է լաւ արեւայրուք ընդունել, եթէ դա թոյլ է տալիս մաշկի որակը: Մաշկաբանը խորհուրդ է տալիս ուշադիր լինել նաեւ ծովափնեայ հանգստի ժամանակ օգտագործող սննդի հանդէպ, քանի որ դա եւս կարող է ազդել առողջութեան, մասնաւորապէս՝ մաշկի վրայ: Օրինակ՝ թթու, կծու սննդամթերքը կարող է գրգռել մաշկը եւ բացասական ազդեցութիւն ունենալ մաշկի վրայ՝ արեւայրուք ընդունելու տեսանկիւնից:

Արեւայրուքը, դրական յատկանիշներից բացի, ունի նաեւ բացասական յատկանիշներ:

Օրինակ՝ արեւհարման ժամանակ վիտամին D է արտադրուում մաշկի մէջ, որը նպաստում է մաշկի վերականգնման, որոշ հիւանդութիւնների հետքաշմանը կամ էլ սրացմանը:

Ի ս կ

մաշկի համար: Իսկ կտսօրին

քսուկներից, թէ ճիշտ խնամքից, թէ

բացասական հետեւանքները առաջանում են արեւհարումը չարաշահելու դէպքում, որոնք կարող են առաջացնել այրածքներ, ուռուցքային փոփոխութիւններ եւ այլն:

Աղբիւրը՝ Doctors.am

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԼՈՒՍԱՆՆԵՐ



Նորմալ ընտանեկան լուսանկարներ. Կատահ է՞ք: Միսալլուն էք, իւրաքանչիւր լուսանկարում կաներայի առջեւ իրար կողքի կանգնած, աթոռին նստած, ձեռքը կողքինի ուսին դրած երիտասարդ, միջահասակ եւ տարեց կանայք եւ մարդիկ ոչ մի բարեկամական կապ չունեն միմեանց հետ: Նրանք բացարձակապէս օտարականներ են, որոնց ամերիկացի արւեստագէտ Ջենի Դայնընդը շարել է իր կաներայի առջեւ: Նա ասում է, որ ցանկանում է լուսանակրելու ակտը




ԿԱՐՆԵՐ. ՎՍՏԱՂ ԷՔ

վերածել կամերայի առջև կատարողական արուեստի: Նա սովորական մարդկանցից օգտուում է որպես այդ ներկայացումների դերակատարներ: Ջեմի Դայնընդի լուսանկարները հարցականի տակ են տանում լուսանկարների վաւերագրական արժէքը: Եթէ կարելի է միմեանց օտար մարդկանց ի մի բերել եւ լուսանկարել որպէս ընտանիք, ապա ի՞նչ վստահութիւն, որ մեր մեզ մնացած հազարաւոր ընտանեկան լուսանկարները նմանապէս կեղծ չեն: Ռ.Ս.



ՊԱՐԱՍՈՒՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Արման Տ.Ստեփանյան





Ամեն անգամ Օլիմպիական խաղերի վերջանալուց կարճ ժամանակ անց սկսում են Պարաօլիմպիական խաղերը: Այն Օլիմպիական խաղերի շարունակությունն է, որը նախատեսված է հաշմանդամների համար: Այս խաղերը Օլիմպիական խաղերից յետոյ համարում է աշխարհի երկրորդ ամենամեծ ու ամենակարեւոր միջազգային մարզական իրադարձությունը: Ինչպես Օլիմպիական խաղերը,

այս մրցութիւնները եւս բաժանւում են երկու տարբեր մարզաճիւղերի՝ ամառային եւ ձմեռային: Իսկ արդէն 1988-ի Սեուլի Օլիմպիական խաղերից մինչ այսօր Պարաօլիմպիական խաղերը սկսւում են հէնց Օլիմպիական խաղերից անմիջապէս յետոյ: Օլիմպիական խաղերի պէս, այս խաղերի կազմակերպչական գործերը կատարում է Միջազգային Օլիմպիական Կոմիտեն:

Սակայն հակառակ Օլիմպիական խաղերի, որը շատ խորն է հին անցեալ ունի, այս մրցութիւնների հիմքը դրւել է ընդամենը երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ: Այն սկսեց 1948-ին բրիտանացի վետերանների մի հաւաքոյթից յետոյ, եւ այսօր վերածւել է մարզական համաշխարհային իրադարձութեան:

Իսկ Պարաօլիմպիա բառակապակցութիւնը դա եկել է հին յունարէմից, եւ նշանակում է օլիմպիադային զուգահեռ, որը հէնց բնութագրում է այս մրցութիւնները, քանի որ նրանք օլիմպիական խաղերին զուգահեռ անց կացող մրցութիւններ են: Իսկ առաջին անգամ պաշտօնապէս այն օգտագործւել է 1988-ի օլիմպիական խաղերի ընթացքում:

Առաջին Պարաօլիմպիական խաղերը տեղի ունեցաւ 1960 թւականին Իտալիայի մայրաքաղաքում՝ Հռոմում: Իսկ այս մրցութիւնների ձմեռային խաղերը առաջին անգամ կատարւեց 1976-ին Շւեդիայում:

Այս տարւայ ամառային Օլիմպիական խաղերը տեղի են ունենալու Օգոստոսի 29-ից մինչեւ Սեպտեմբերի 9-ը Լոնդոնում: Մրցութիւններին մասնացում են մօտաւորապէս 4200 մարզիկներ, որոնք միմեանց հետ մրցելու են տարբեր մարզածեւերում: Այս մրցութիւններին թուվ ամենից շատ մարզիկն է ներկայացրել Չինաստանը, ապա՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնք այս

մրցութիւններին ունեն հերթաբար 282 եւ 216 մարզիկներ: Իրանը այս մրցութիւններին ունի 79 մարզիկ, իսկ Չայաստանը՝ 2: Այս տարւայ մրցութիւնների բացման արարողութիւնը բացառիկ հետաքրքրութեան արժանացաւ, քանի որ այդ արարողութեանը ներկայ էր, եւ առաւել եւս՝ վարում էր անգլիացի աշխարհահռչակ ֆիզիկոս Ստեֆըն Չաուկինգը: Նա, ով այսօր չի կարողանում նոյնիսկ նորմալ շարժւել ու խօսել, եւ այն կատարում է իր սայլակի ու նրա վրայ ամրացւած համակարգչի միջոցով, մինչ այսօր համարում է Անգլիայի Քեմբրիջ համալսարանի դասախօս, եւ կարելու է հետազօտութիւններ է կատարել ու կատարում է՝ յատկապէս Սեւ Խոռոչների եւ Քւանտայի ձգողականութեան եւ ընդհանրապէս տիեզերագիտութեան ոլորտներում: Չաուկինգը յայտնի էր իր հանրամատչելի ֆիզիկայի գրքերով, ուր նա պարզ լեզուով եւ առանց որեւէ դժւար մաթեմատիկական ֆորմուլաների, ընթերցողին է պատմում տիեզերքի մասին: Նա ընդամենը 20 տարեկան էր, երբ նրա մօտ յայտնաբերւեց A.L.S հիւանդութեան նշանները: Դա մի հազաւոյթա հիւանդութիւն է, որով տառապող մարդը ներւային համակարգի քայքայման հետեւանքով, աստիճանաբար կորցնում է խօսելու, շարժելու եւ նոյնիսկ մտածելու ունակութիւնը, եւ վերջում մահանում: Սովորաբար այս հիւանդութեամբ տառապող մարդիկ 2-3 տարի են ապրում, այն ինչ բժիշկները նախատեսում էին նաեւ Չաուկինգի համար, սակայն նա այսօր 70 տարեկան է եւ ունի 3 զաւակ: Ըստ բազմաթիւ մասնագէտների նա համարում է անցեալ դարւայ ամենամեծ գիտնականը:

թիվ 61

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

ՅՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- 1-Երկու նւիրական անուններ ամուր դրօշմած իւրաքանչիւր հայրենասէր հայի սրտում:
- 2-Հայկական ժողովրդական նւագարաններից - քէն - ծերութեան նախանշաններից:
